

Մ. Զուլալյան

16-րդ ԴԱՐՈՒՄ՝ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ
ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

16-րդ դարի առաջին կեսին Հայաստանի տերիտորիայում մղվող թուրք-ղզլբաշական երկարատև պատերազմների հետևանքով Արևմտյան Հայաստանի ու Դրդստանի տերիտորիան նվաճվեց թուրքերի կողմից: Հայ ժողովուրդը ընկավ ոչ միայն թուրքական, այլև քրդական ֆեոդալիզմի լծի տակ: Հանձին թուրքերի, քուրդ բեկերը գտան ուժեղ հենարան, որն ապահովում էր նրանց ֆեոդալական իրավունքները հպատակների նկատմամբ: Այս հողավածում մենք կֆնենք թուրքական հարկային սիստեմը Հայաստանում:

Թուրքական լծի ծանրությունը նախ և առաջ արտահայտվում էր անցյալում հարկային քաղաքականության մեջ: Համապատասխան փաստաթղթերի բացակայությունը անցյալում թույլ չի տվել կոնկրետ կերպով ուսումնասիրել այդ հարկային սիստեմը:

Արևմտյան Հայաստանի բնակչությանից գանձվող հարկերի մասին մոտավոր պատկերացում կարելի է ստանալ 1945 թ. ժամանակակից թուրք պատմաբան Օմեր Լութֆի Բարքանի Անկարայում լույս տեսած արխիվային նյութերից՝ այսպես կոչված կանուն-նամակներից¹ (Օրենսգրքերից), որոնց մի մասը վերաբերում է Արևմտյան Հայաստանի նահանգներին:

* * *

Օսմանյան կայսրության բնակչության աշխատավոր մասը, նախ և առաջ գյուղացիությունը, ինչպես ոչ մուսուլման, այնպես էլ մուսուլման, իր ուսերի վրա էր կրում պետական ապարատի կողմից կատարվող չահագործման ամբողջ ծանրությունը: Վճարելով բազմաթիվ ու բազմապիսի հարկեր, թե անմիջապես պետությունը, և թե տեղերում նշանակված ֆեոդալներին՝ այսպես կոչված դաիմներին, թիմարյոթներին² ու մյուսներին:

¹ Omer Lütfi Barkan „XV ve XVI inci asrında Osmanlı Imperatorlugunun Ziraî ekonominin hukukî ve malî esasları“ birinci cilt, Ankara 1945.

² 15—17-րդ դարերում Օսմանյան կայսրության մեջ պետական հողը հիմնականում, որպես առանձին ավատներ, այսպես կոչված «դիմակներ» և «թիմար»-ներ բաժանված էր ֆեոդալներին՝ պայմանական տիրապետության իրավունքով: Այն հոգերը, որոնց տարեկան եկամուտները կազմում էին 20 հազարից մինչև 100 հազար ափս, կոչվում էին «դիմակ»-ներ, իսկ տարեկան 300-ից մինչև 20 հազար եկամուտ բերող հողատիրները կոչվում էին «թիմար»-ներ: Այդ հողատիրներին տիրապետած ֆեոդալները համապատասխան ձևով կոչվում էին դաիմներ և թիմարլներ, այլ կերպ ասած թիմարյոթներ: Զիամակները և թիմարյոթները ավելի հայտնի էին սիվահիներ (սլարսկերեն հեծյալներ) անուններով: Նրանք պարտավոր էին կատարել զինվորական ծառայություն պետության

* *

Ինչպիսի հարկեր էին գանձվում Արեւմտյան Հայաստանի բնակչութիւնից: Այս հարցի մոտավոր պատասխանը, ինչպես ասացինք, տալիս են կանոն-նամակները:

Հայկական նահանգներին վերաբերող կանոններում նշված հարկերի մեծ մասը հիմնականում գանձվում էր հայերից, որովհետեւ անգամ 1635 թ. ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեի ասելով, «Թուրքից մինչեւ Թերրիզ երկիրը բնակված է հայերով» և որ «հիսուն հային ընկնում է մի մուսուլման»:

Պետք է հենց սկզբից նաև նշել, որ ներքոհիշյալ հարկերը բացառութեամբ խարաջ ին, ջրիցիկն-ի և ծիսպենջն-ի վերցվում էին, ինչպես քրիստոնյա (հայ), այնպես էլ մուսուլման (թուրք, քուրդ, թուրքմեն) ազգաբնակչութեանից, իհարկե, ավելի նվազ չափով:

Ընդհանրապես, Օսմանյան կայսրութեան մեջ հպատակներից գանձվող հարկերը լինում էին երկու տեսակ:

Առաջինը կոչվում էր «օրինական հարկեր» (սուսում-ի շերիե՝ Rüşum-i şeriye), այսինքն շարիաթին համապատասխան: Այս հարկերը հիմնականում գանձվում էին պետութեան կողմից ու բնորոշում պետութեան ու հպատակի փոխհարաբերութեանները:

Հարկերի երկրորդ տեսակը կոչվում էր՝ «հարկեր ըստ սովորութեան» (սուսում-ի օրֆիե և կամ «թեքջալիֆի օրֆիե» Rüşum-i ʾorfiye; tekelif-i ʾorfiye): Այս հարկերը հիմնականում գանձվում էին տեղերում նշանակված սիփահիների կողմից ու բնորոշում գյուղացու ու ֆեոդալի փոխհարաբերութեանները:

Ինչպես բոլոր մուսուլմանական երկրներում, այնպես էլ Թուրքիայում, որպես հողային ու օրինական հարկ, մուսուլման բնակչութեանից գանձվում էր «ուշր» (oşr) բերքի մեկ տասերորդ մասը, և երբեմն էլ ավելի: Ոչ մուսուլմաններից (ավյալ դեպքում հայերից) գանձվում էր խարաջ երկու ձևով՝ խարաջ-ի մուկասամա՝ («Harac-i mukaseme», արարերեն նշանակում է մասնակի, պրոպորցիոնալ խարաջ) և, խարաջի մուվազաֆ (harac-i muvazzaʿ արարերեն նշանակում է ծառայութեան խարաջ), գանձվում էր հողօգտագործման համար³:

Որպես խարաջի մուկասամա, գանձվում էր բերքի որոշ մասը: Մուկասաման (մասը, պրոպորցիան) կարող էր լինել՝ «ուշր»՝ բերքի մեկ տասերորդ մասը, «խումուս» (արարերեն)՝ բերքի մեկ հինգերորդ մասը, «սուսում» (rubu՝ արարերեն)՝ բերքի մեկ քառորդ մասը, սուլիսուս («sulus, արարերեն») բերքի մեկ երրորդ մասը, «նիսի» («nisî», արարերեն) բերքի մեկ երկրորդ մասը:

Նկատմամբ և պատերազմի ժամանակ յուրաքանչյուր 5000 աղջե եկամտի դիմաց պարտավոր էին բանակին մատակարարել մի ռազմիկ՝ «ջերեթի» անունով: Սրանց մասին տե՛ս Այնի Ալիի մոտ՝ նրա հետեյալ աշխատութեանում. «Kavanin-ı Ali Osman der hulesc-i mezanini-defter-i divan Թարգմանութեանը M. Belin-ի, Journal Asiatique, 1870, t. XV, p. 239—274.

¹ Jean Baptiste Tavernier, Les six voyages de Jean Baptiste Tavernier, Paris 1713, p. 39.

² Տե՛ս Boris Christoff Nevkoff, «Osmanlı Imperatorlugunda cizye (Türk tarih kurumu Belleten, cilt VIII, teğrin 1944, S. 617).

³ Տե՛ս Էրուսուզի հողի վերաբերյալ կանոնները, «Ulku», 1938, cilt XI, s. 344.

«Սարաջ-ի մուվազաֆը» վճարելու էր ոչ մուսուլմանը հողօգտագործման համար: Սակայն, հաճախ «սարաջ-ի մուվազաֆ»-ը քրիստոնյաներից վերցնում էին այն ժամանակ, երբ հողը չէր մշակվում¹:

16—17-րդ դարերում թուրքիայում «սարաջ»-ը կորցրել էր իր սկզբնական նշանակությունը, որպես հողային հարկի և «սարաջ» անունը դարձել էր հպատակներից գանձվող պետական բազմաթիվ հարկերն արտահայտելու հավաքական տերմին:

Այս վերջին հանգամանքը հնարավորություն էր տալիս ժողովրդի բացարձակ կողոպտման: Այսպես՝ Պարամանիայի վիլայեթի կանուն-նամեի մասված է, որ խարաջ հավաքող պետական պաշտոնյաները իրենց ձեռքով բերն են դարձնում հարկատուներին, իջեցնելով նրանց տներում, և որ «օրենքը նրանց այդ բանում չի սահմանափակել»: Բայց նրանց մեկնումից հետո նոր հարկապահանջներ եկել պահանջել են նոր խարաջ, որի հետևանքով «այսօր ժողովրդը է, ցույց տալով, որ վճարված է տասը տարվա խարաջ»²:

Սարաջ վճարվող գումարի չափը միշտ եղել է փոփոխական: 15-րդ դարի կեսերից սկսած թուրքիայում որպես խարաջ գանձվող հարկի գումարը ըստ պատմագիր «Օրուջ» «Աբիլի», կազմել է 50 ալչե³, և որ այդ գումարի չափը «այդ օրվանից էլ այդպես մնացել է», այսինքն մինչև 16-րդ դարը՝ հեղինակի ապրած ժամանակաշրջանը⁴:

Կայսերի (Գեսարիա) 16-րդ դարի սկզբի (1500) կանուն-նամեի համաձայն պետք է գանձվեր յուրաքանչյուր անհավատից 26 ալչե խարաջ⁵: Հայաստանի որոշ մասերում խարաջի փոխարեն երբեմն ստիպել են կատարել պարսպադիր պարհակալի մշխատանք: Այսպես, Վանում, Էվլիա Չելեպիի ասելով, «երեք հայկական թաղերի բնակիչները պարտավոր են իրենց խարաջի փոխարեն մշտապես նորոգել բերդը»⁶:

Սակայն, թուրքիայում, ինչպես և այլ մուսուլմանական երկրներում, քրիստոնյա հպատակներից գանձվող ու ստորացուցիչ բնույթ ունեցող հարկը «չիղին» էր (գլխահարկը):

Ըստ մուսուլմանական շարիաթի ջիղիից ազատ էին՝ կանայք, երեխաները, ստրուկները, ծերերը, կրոնավորները, ընչազուրկները:

¹ В. Д. Чермзин, Турция, её могущество и распадение, СПб, 1874, стр. 312.

² Kanun-name-i vilayet-i karaman (Omer Lûtfi Barkan. հիշյալ աշխատությունը՝ s. 59)

³ Ալչեն (akçe) թուրքական արծաթե դրամի միավոր է: Ալչե թուրքերեն նշանակում է սպիտակավուն: Օսմանյան առաջին ալչենները հավասար էին մեկ քառորդ մսխալի, իսկ մսխալը հավասար էր 4,8 դրամի (Y. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilâtından kapukulu ocakları, Ankara, 1942, s. 464).

Սուլթան Սելիմ Բավուղի ժամանակ վաթսուներեք օսմանյան ալչեն հավասար էր մի օսմանյան ոսկու (նուլյն տեղ, էջ 467): Սուլթան Սուլեյման Կանունիի ժամանակ հարյուր զիրհեմ արծաթից 500 ալչե է կտրվել: Հետագայում, մեկ զիրհեմ արծաթը հավասար է եղել 5 ալչեի, (նուլյն տեղում):

⁴ Oruç, Adil Tevarih- 'Ali Osman, Hanover, 1925, s. 46. Հայկական աղբյուրներում «խարաջ» տերմինն օգտագործվում է բացառապես «ջիղի» իմաստով (տե՛ս Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. II, Երևան, 1956, էջ 270, 381, 382, 417, 420, 483, 517 և այլն):

⁵ Kayseriye kanunu (O. L. Barkan, s. 56).

⁶ Evlia Çelebi, Siyahetnâme, cilt IV, s. 183.

Օսմանյան կայսրության մեջ ջիզիեն գանձում էին մուսուլմանական տարվա սկզբին՝ մուհարրամ ամսին (հունիս—հուլիս):

17-րդ դարում ջիզիեի գանձումը կատարվում էր հետևյալ կերպ. Ստամբուլում, զլիսավոր դաֆթարդարի հրամանատարության տակ գտնվող ջիզիեի հաշվետարար ջիզիե մուհասերեջիսի¹, պատրաստել էր տալիս կնքված պատրաստի թղթեր, որի վրա գրված էր լինում «պարտադիր ջիզիե» (ջիզիեի ջերրան)², ոչ մուսուլմանների համար: Այդ թղթերը հանձնվում էին հատուկ պաշտոնյաներին՝ ալսպես կոչված թահսիլդարներին, ջիզիեդարներին, որոնք զլուդերում քեթիուդաների (տանուտերերի), դատավորների (կադիների) օգնությամբ հավաքում էին ջիզիեները և հանձնում թղթերը:

Աղյուսների վկայությամբ ջիզիեն հավաքող պետական պաշտոնյաները կողոպտում էին ժողովրդին՝ ջիզիեի հետ միասին այլ անուններով հարկեր գանձելով: Հայտնի թուրք պատմաբան Արդուրահման Վեքիֆ բեյը այդ մասին գրում է. «Երբ պարզվեց, որ մուսուլմաններից ջիզիեի հետ միասին գանձում են մյուրաշիրի³, թահսիլդարի⁴, քեֆելլեմե⁵, «կոլեմ հակեր»⁶ և այլ հարկեր այլ անուններով, ապա հիշքի 1246 թ. (1830—1831), որպեսզի վերջ դրվի դրան, հատուկ որոշում ընդունվեց»:

Թուրքիայում գոյություն ունեւ երկու տեսակի ջիզիե, «մաքտու ջիզիե» («maktu cizye»), այսինքն միանվագ և, «առ-ոսուս» («ar.—ruus») այսինքն ըստ զլուխների:

Առաջին տեսակի ջիզիեն գանձվում էր պատերազմում պարտված ոչ մուսուլմաններից, միանգամից, որոշակի գումարի ձևով:

Երկրորդ ու հիմնական ձևը հանդիսանում էր «առ-ոսուս» ջիզիեն, որը գանձվում էր բոլոր հարկատու ոչ մուսուլման հպատակներից, համաձայն նրանց նյութական դրության: Ըստ այդմ էլ բոլոր հպատակները բաժանվում էին երեք հիմնական խմբի՝ աղքատների (էդնա, edna), միջակների (էվսատ, evsat) և հարուստների (ալա, 'aia, որոնք համապատասխան ձևով պիտի վճարեին՝ տաս, քսան և երեսուն ալչե⁷:

Սակայն պետք է նշել, որ ոչ ամենուրեք և ոչ ամեն ժամանակ նկատի էր առնվում այս սկզբունքը, այն հաճախակի խախտվում էր, տեղի տալով բացարձակ կողոպուտին: Այսպես, ենի իլ (Սերաստիայի նահանգ) քաղաքի 1583 թ. կանուն-նամեում ասված է, որ «տարրերություն չգնելով աղքատի, հարուստի ու միջակի միջև՝ յուրաքանչյուրից գանձում են 25-ական ալչե (ջիզիե)»⁸:

¹ «Մյուրաշիրիե» («mübaşirye»), mübaşir, արարերեն նշանակում է հսկիչ: Հետեւաբար «մյուրաշիրիե» ուղարկված հսկիչին վճարված գումարն է:

² «Թահսիլդարիե» («tahsildariye») — թահսիլդարի (ջիզիեն հավաքող պաշտոնակատարին) հանձնված գումարին տրված անունն է:

³ «Քեֆելլեմե» («Kefelleme»), ջիզիե-ն համայնքից գանձվելու պատճառով, հարկի գանձումն ապահովելու համար տեղի «մուլթար»-ները վկա (kail) են լինում, և որի համար ստանում են որոշակի գումար:

⁴ «Կոլեմ հակեր» («Kolem hakkı») — կոլեմ — ծառա է նշանակում: «Կոլեմ» այստեղ պետության կողմից ուղարկված պաշտոնյան է: «Կոլեմ հակեր» — «ծառայի իրավունք», այսինքն «ջիզիե»-ն գանձող պաշտոնյային տրվող գումարը:

⁵ Yeni İl kanunu (Օմ. Լ. Barkan s. 83), տե՛ս նաև Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. IV, էջ 483:

⁶ Եռչն տեղում:

Այստեղից չպետք է հետևեցնել, որ գանձվող ջիզիանի գումարը եղել է 25 ակչև: Ըստ Բիթլիսի կանուն-նամեի, միևնույն նահանգի մի տեղի հայերից գանձել են 35-ական ակչև, մի այլ տեղից՝ 55-ական ակչև¹:

Իսկ այդ նույն ժամանակ, Շերեֆ Ուզդինի վկայությամբ, Բիթլիսի վիլայեթի ընդհանուր հաշվառումից հետո Բիթլիս քաղաքի 4000 «անհավատ հայերից» գանձել են 70-ական ակչև ջիզիան²:

16-րդ դարի վերջում պետական գանձարանի գերաժախտների ու առաջ եկած դեֆիցիտի հետևանքով, պետությունը քրիստոնյա հպատակներից որպես ջիզիան, Կոչիբեյի ասկույ, գանձել է մինչև իսկ 240-ական ակչև³:

Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ պետական դեֆիցիտը ծածկելու կարևորագույն աղբյուրը, Օսմանյան կայսրության մեջ հանդիսանում է ջիզիան հարկի գումարի ավելացումը:

Շեթե պետությունը դրամի կարիք ունենա,— գրում է Էրասկի Էլեասը, 17-րդ դարի Թուրքիայի ներքին կյանքը ուսումնասիրած հեղինակը,— ապա այս տեսակի հարկը (ջիզիան) կրկնապատկվում է: Եվ այդ կարիքը, որը հաճախ է ծնվում, չունի այլ աղբյուր, քան այն մարդու երևակայությունը, որին հանձնարարված է այդ տեսակի հարկի գանձման վարչությունը⁴:

«Ջիզիանի գանձումը Թուրքիայում երբեք չի տրամադրվել զախմաներին ու թիմարյութներին, այն միշտ հանձնարարվել է պետական հատուկ պաշտոնյաներին: Միայն Հարավային Հայաստանի որոշ մասերում, օրինակ՝ Բիթլիսում, ուր փաստորեն տեղ ու տնօրեն էին քուրդ բեկերը, էվլիա Չելեբիի ասելով, քրիստոնյա հպատակներից գանձված ջիզիանի գումարի կեսը հանձնվում էր նրանց⁵:

Թուրքիայում քրիստոնյա հպատակների համար փաստորեն գլխահարկ էր նաև «խապենջը»: Իսկ իմաստն ու նրա ծագումը մինչև այժմ չի լուծված: Ենթադրվում է, որ դա պարսկերեն բառ է բաղկացած երկու բառից՝ «իզ»՝ որ նշանակում է «ից» և «պենջ»՝ «հինգ», այսինքն հինգից մեկը: Նվաճումների հետևանքով իրենց ձեռքն ընկած գերիներից թուրքերը վերցնում էին կամ հնգից մեկին՝ տարբեր ծառայությունների, իսկ հետագայում նաև բանակի շարքերը լրացնելու նպատակով, կամ թե լուրաքանչյուր գերուն գնահատելով 125 ակչև՝ վերցնում էին նրա արժեքի մեկ հինգերորդը, այսինքն 25 ակչև և դա կոչվում էր պենջիլ⁶: Ոմանք ենթադրում են, որ «պենջիլն» ու «խապենջը» միևնույն հասկացողություններն են, հետևաբար, «խապենջը» վերցվում էր քրիստոնյա հպատակներից, քանի որ թուրքերը նրանց համարում էին իրենց մշտական գերիները:

Վերջերս, հայտնի արևելագետ Պոլ Վիտտելը իր «Մանկահավաքը և շարիան» հոդվածում գտնում է, որ «խապենջը» ու «պենջիլը» տարբեր հասկացողություններ են, և որ «խապենջ» բառը հավանաբար սլավոնական ծագում

¹ Bitlis kanunu (Om. L. Barkan, s. 93).

² B. T. Charmoy, Chéref—Nameh ou fastes de la nation kourde, par Chéréf-Oud-dine, prince de Bitlis, tome II, première partie, St. Pétersbourg, 1873, p. 290—291.

³ B. Д. Смирнов, Кочибей Гомюрджинский и другие османские писатели о причинах упадка Турции, СПб. 1878, стр. 142—143.

⁴ Ebas'i Elias, Etat actuel de l'empire ottoman, Tome I, Paris, 1792, p. 232—233.

⁵ Evlia Çelebi, „Siyahname“ cilt IV, s. 89.

⁶ Sü'ü Aşık Paşa Zade, Tevarih-i 'Al-i-Osman, Leiğ zig, 1927, s. 50, Sâ'ed-ed-din „Tac-üt-tevarih“ cilt I, s. 75, Oruc 'Adil, s. 21—22.

ունի: Իր այս տեսակետը հիմնավորելու համար նա մեջ է բերում մի կանոն-նամե, ուր գրված է, թե իսպենջ բառը «անհավատների լեզվով» է¹:

Այստեղից էլ եզրակացվում է, որ իսպենջը հողօգտագործման համար գանձված հարկն է: Ըստ Բարքանի, իսպենջը նույնն է, ինչ որ մուսուլման ռայաթներից գանձված «ոհամ»-ի չիֆտը²:

Բարքանի այս տեսակետը ճիշտ կարող է լինել, որովհետև էրզրումի կանոն-նամեում պարզորեն գրված է հետևյալը. «Եվ հիշյալ լիվայի (էրզրումի) անհավատները իրենց խարաջները վճարելուց հետո, ամեն մի հարկատու գլխի համար «ոհամ»-ի չիֆտի փոխարեն 25 ակչե իսպենջ վճարեն. հնագույն օրենք է: Իսպենջը վճարելուց հետո, նրանք «ոհամ»-ի չիֆտ» և «ոհամ»-ի դոն-յում» չեն տա³:

Սրա հետ մեկտեղ պետք է նշել նաև, որ «իսպենջ»-ը իրենից ներկայաց-նում է ոչ այլ ինչ, քան գլխահարկ, որովհետև նա գանձվում էր բոլոր ոչ մուսուլման հպատակներից «անկախ այն բանից, թե նա հող մշակում է, թե ոչ»⁴: Գյուրջիստանի ընդարձակ դաֆթարում հիշատակված հարկերի մեջ «իս-պենջը» առաջին տեղն է գրավում: «Իսպենջ» հարկի չափը միշտ եղել է 25 ակչե⁵:

Թուրքիայում մի լրացուցիչ գլխահարկ կարելի է համարել նաև «ավա-րիզը», միայն այն տարբերությամբ, որ հարկը գանձվում էր ինչպես ոչ մու-սուլման, այնպես էլ մուսուլման հպատակներից:

«Ավարիզ» («Avârız») արաբերեն اوارز բառի հոգնակի ձևն է, որը նշա-նակում է պատահական (հասույթների): Այս տերմինի տակ հասկացվում էին զանազան արտակարգ դեպքերի ժամանակ (հատկապես պատերազմների) ու-յաթի կատարած տարբեր աշխատանքները: Հաճախակի, «ավարիզը» փո-խարինվում էր տուգանքով: «Ավարիզ»-ը օսմանցիների մոտ մուտք է գոր-ծել իլխաններից⁶:

Փաստաթղթերում և ազդյուններում «ավարիզ»-ի փոխարեն հաճախ օգ-տագործվում են «ավարիզ ակչեսի» («Avarız akçesi»), «ավարիզի դիվանիս» («Avarız-ı divaniye») և «պակսիմեթ ակչեսի» («paqsımet akçesi») տերմին-ները: Պակսիմեթ նշանակում է չորացած հաց, այսինքն դարձյալ պատերազմ-ների ժամանակ զինվորների կարիքների համար, սվյալ դեպքում հացի հա-մար, հավաքված գումարը:

Ըստ թուրքական աղբյուրների, սուլթան Բայազեդ 2-րդի (1481—1512) ժամանակ Ստամբուլում և էդիրնեում հիշրեթի 903 (1508—1509) տեղի ունեցած մեծ երկրաշարժի ու նրա պատճառած փասաների հետևան-

¹ Տե՛ս Paul Witteck, Devshirme and sharia, Bulletin of the school of oriental and african studies University of London, Vol. XVII, Part 2, London, 1955, p. 272.

² «Ռեսմ-ի չիֆթ» («resm çift») ար. պարսկերեն — մուսուլման ռայաթներից գանձ-վող հողային հարկ մի մուսուլմանից: Վերջինը իրենից ներկայացնում էր որոշ հողակե-տոր, որը կարելի էր մշակել մի տարվա ընթացքում մի ղուլյո եղան օգնությամբ: «Չիֆթ» պարսկերեն նշանակում է «զույգ»:

³ Erzurum kanunu (Om. L. Barkan, s. 65).

⁴ Տե՛ս, M. Z. Pakalın, Osmanlı tarılı deyimleri..., cilt I, 1951, s. 88.

⁵ Տե՛ս, Erzurum kanunu, s. 64, Gürcistan kanunu, s. 197, Çemişgazek livası kanu- nu s. 189, Bitlis kanunu s. 192 (Om. L. Barkan).

⁶ Տե՛ս, Y. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilatına medhal, İstanbul, 1941, s. 162, 247, 261.

քով, սուլթանի կարգադրությամբ ամբողջ երկրում չափահաս տղամարդկանցից 20-ական ակզե ավարիզ է հավաքվել և յուրաքանչյուր 20 տնից մի մարդ աշխատանքի լծվել¹։ Իսկ սուլթան Սուլեյմանի ժամանակ յուրաքանչյուր չորս հինգ տարին մի անգամ ամեն մի հարկատու հպատակից 20-ական ռակչե ավարիզ է դանձվել²։

16-րդ դարի վերջին պետական դանձարանում եզած դեֆիցիտի հետևանքով «ավարիզը» դառնում է օրինական ու մշտական դանձվող հարկ, որի չափը փոփոխական էր։ Այսպես, Կոչիբեյի ասելով, և թե սկզբում յուրաքանչյուր տնից դանձում էին 20—70 ակզե ավարիզ, ապա հետագայում մինչև իսկ 300 ակզե³։

Հայտնի է, որ 16-րդ դարում Հայաստանի տերիտորիայում թուրք—ղղրաշական անվերջ պատերազմների հետևանքով պարհակային աշխատանքի պրակտիկան մեծապես տարածված էր. դա իրենից ներկայացնում էր ոչ այլ ինչ, և թե ոչ օրինականացված «ավարիզ»։ 1551 թ. մի հիշատակարանում Սերաստացի Մինաս գրիչը գրում է.

«Յայս ամի եկեալ Վազի փաշայն բազում և անթիւ զօրօք և զնաց դեպի յարեւելս ի Շահաստան (Թավրիզ), և յոյժ նեղեցին և չարչարեցին զքրիստոնեայսն ի հարկապահանջութիւն։ Եւ հանեն զբազում արհեստաւորս վասն շինութեան Ղարսայ բերդի, և անտի ելեալ դերեցին զերեանայ գաւառն և զքրիստոնեայս բազումս ի սուր և գերութիւն վարեցին և ոմանց փախստական լեալ ի լերինս և ի քարածերպս վիմացն յուսալով ի խնամս մարդասէրն աստուծոյ»։

Մի այլ հիշատակարանում Ջաքարիա Վարադեցին գրում է.

«Ի սոյն ամի բերաւ ջուրն Նամիրամայ ի քաղաքն Վան չորս ամիս բազում աշխատանքս երկիր և քաղաք ի վերայ դատելով և ապա բերաւ ջուրն դի ութ հազար սարակ (բանող ձեռք) քաղաքեն զնաց, թող զերկիրս և զայլս ի յօտար աշխարհէ»⁴։

«Ավարիզի» մի տարատեսակը թուրքիայում հանդիսանում էր «Սյուրսարը» („Sür-sat“), որը թուրքերեն բառացի նշանակում է «քշիր ծախիր»։ Այդպես էր կոչվում այն պատճառով, որ պատերազմների ժամանակ թուրքական բանակի անցած վայրերում բնակիչները պարտավոր էին բանակի կարիքների համար ապահովել մթերքներ, դարի ու հարդ՝ անասունների համար, իսկ անհրաժեշտության դեպքում բանակին «օգնել» լծկան անասուններով, կառքերով, բանվորներով, «օյուրեքչի» („Kürekl“), «ազապ» („azap“) և այլ անուններով։

Կոչիբեյը Սյուրսարի մասին տալիս է հետևյալ բացատրությունը. «Այս հարկը (սյուրսարը),— ասում է նա,— դանձվում է ուսուցից պատերազմի ժամանակ։ Սյուրսարը տրվում էր գարու, հաճարի, ալյուրի, փայտի ձեռք այն չափով, որ չափով որ որոշված է, և ուսուցիչը իրենք կտանեն ամենաբարոտ տիրակալի նշանակած վայրը։ Մինչև որ անհրաժեշտ քանակի սյուրսար չհա-

¹ Solakzade tarihi, s. 321.

² Omer Lütfi Barkan, 'Avariz (Islam ansiklopedisi, 1 cilt, İstanbul, 1948, s. 16).

³ В. Д. Смирнов, Кочибей Гомюрджинский... стр. 141.

⁴ Հիմնական Մատենադարանի ձեռագիր № 6272 Եր. 250ա. նաև Ա. Գ. Հովհաննիսյան, «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», չհրատարակված աշխատություն, հատ. II, էջ 510։

⁵ Նույն տեղում։

վաքվի, հավաքը կատարվում է գիշեր ու ցերեկ: Դրանց արժեքը վճարվում է փաղիշահական դանձարանից, այնպես որ սեփականության իրավունքը չի իրախտվում, սակայն եթե պատերազմ չլինի, ռաջալից սյուրսաթ դանձել չի կարելի, արգելված է»¹:

Այստեղ խոսվում է վերցված ապրանքի արժեքը պետության կողմից փոխհատուցելու մասին, սակայն պրակտիկայում ճահախափի ապրանքի արժեքը չէր վճարվում»²:

Մինչև այժմ նշված հարկերը համարվում են «օրինական», այսինքն շարիաթին համապատասխան: Այս «օրինական» հարկերի հիման վրա, հետագայում այլևսլ անուններով առաջացավ հարկերի մի ամբողջ սիստեմ: Այսպես, հողալին հարկը հանդես էր գալիս «ոսեմի չիֆտ», «ոսեմի դլոնյում»³ անուններով՝ մուսուլմանների համար և «ոսեմի ի բադ», «ոսեմի ի բոստան», «ոսեմի ի բախա», «ոսեմի ի բեննակ», «ոսեմի ի ասիապ», «ոսեմի ի մելլարի», «ոսեմի ի գեշտրանի» և այլն բոլոր հպատակների համար: Շարունակվում են դանձվել դեռ նախորդ դարերում գոյություն ունեցող այնպիսի հարկեր, ինչպիսիք են՝ «բահրան», «սալարիեն», «ալաֆեն» և «ուլաֆեն», որը Թուրքիայում կոչվում էր նաև «ոսեմի ի արաֆ»: Բացի այս բոլորից, ֆեոդալների (սիպահիների), ինչպես և պետական պաշտոնյաների կողմից դանձվում էին բազմաթիվ ու բազմապիսի հարկեր, այլ անուններով, որոնք կանոն-նամներում հայտնի են «բիդ ատ» (bid'at) անվան տակ, որ արարերեն նշանակում է նորամուծություն, այսինքն շարիաթին չհամապատասխանող ու նրան հակասող:

«Սալարիեն» (Salariye) — ալաֆ էր կոչվում հողատիրոջը տրվող բերքի մի մասը: «Սալար» պարսկերեն նշանակում է զլուխ, հրամանատար: Սալարիեն դանձվում էր «ուշր»-ի փոխարեն, ինչպես ոչ մուսուլմանից, այնպես էլ մուսուլման հպատակներից:

«Ալաֆ և ուլաֆ» կամ «ոսեմի-ի ալաֆ» — արարերեն «alaf բառից է, որը նշանակում է խոտ: Ինչպես ցույց է տալիս ինքը բառը, այս հարկը պարտադիր կարգով վերցվում էր ռաջալից, պետական ծառայողների ու տեղի սիպահիների ձեռքն ու անասունները կերակրելու համար: Եթե սկզբնական շրջանում հարկը վերցվում էր բնամթերքով (գարի, խոտ, հարդ և այլն), ապա հետագայում այն վերցվում էր գրամով: Ըստ Բիթլիսի կանոն-նամի, որպես «ոսեմի-ի ալաֆ», յուրաքանչյուր անձից դանձվել է տարեկան վեցական ալչեն⁴:

«Ռեսմ-ի բոստան» («Resm-i bostan»), ըստ 1583 թ. Տրապիզոնի կանոնի, բանջարանոց ունեցող յուրաքանչյուր տնից ուրպես «ոսեմի-ի բոստան» դանձվել է երկուական ալչեն⁵:

¹ А. С. Тверитинова, Второй трактат Кочинбея, (Учёные записки института Востоковедения, 1953 г. VI том. стр. 245).

² М. Z. Pakalin, Osmanlı tarih deyimleri..., III cilt, XXI fas., İstanbul, 1955, s. 300.

³ «Դյոնյում» («dönüm») Թուրքական չափ է, որն հավասար է հասարակ քայլով 40 քայլ լայնության և բառասուն քայլ երկայնության (աե'ս՝ Erzurum kanunu, s. 65).

⁴ «Բիդ'ատաների մասին, աե'ս, Օմ. Lütfi Barkan, Osmanlı İmparatorlugunda çiftçi sınıfların hukukî statüsü, ժուրնալ «Ülkü» 1937, cilt IX, s. 42.

⁵ Տե'ս, Kanun-name-i İiva-i Divrigi, s. 118, Gucistan kanun-namesi, s. 198. Erzurum kanunu, s. 65.

⁶ Vilayet-i Bitlis kanunu, s. 192.

⁷ Trabzon kanunu, s. 58.

«Ռեսմ-ի բաղ» («Resm-i bag-») յուրաքանչյուր հարյուր տունի որթատնիկի, պտղատու ծառի համար որպես «ռեսմ-ի բաղ» գանձվել է երկու ակչև¹։ Սակայն, ինչպես երևում է կանուն-նամենների տվյալներից, «ռեսմ-ի բաղ»-ը մտել է խարաջ հասկացողության մեջ, և պատահական չէ, որ հաճախակի հիշատակվում է «բաղ խարաջը» («bag- haracı») տերմինը։ Այս դեպքում պահանջվում է որոշակի նշանակված գումար։ Ըստ Էրզրումի քաղաքի կանուն-նամենի, քաղաքի հայ բնակչությունից որպես «բաղ-խարաջ», տարեկան գանձվել է 12 հազար կարաջա ակչև, այսինքն 4000 Օսմանյան ակչև²։

«Ռեսմ-ի ասիար» («Resm-i asiab»), ջրաղացի համար գանձվող հարկի անունն է։ «Ասիար» պարսկերեն նշանակում է աղաց։ Այս հարկը թուրքերեն կոչվում է «ռեսմ-ի դեգիրման» (Resm-i degirmen), և ունի նույն իմաստը։ Ըստ Էրզրումի կանուն-նամենի, հարկը գանձվում էր բերքահավաքի ժամանակ, ամառվա տաք օրերին։ Հարկի չափը եղել է լրիվ տարվա համար՝ 60 ակչև, իսկ կես տարվա համար՝ 30³։

«Ռեսմ-ի միրաբի» (Resm-i mirabi) կամ «հակ-ի շուրուբ» (hak-işurub), Հողամշակության ընթացքում ջուրն օգտագործելու համար վերցված այս հարկը, որը կոչվում էր նաև «մերաբիլիք սեսմի» (mirabilik resmi) կազմում էր տվյալ մարզը, շրջանը, գյուղը տնօրինող մուսուլման ֆեոդալի («միր-ի լիվաջի», դայիմի ու թիմարիոտի), ինչպես և երբեմն առանձին մյուլքադարերի, կարևորագույն եկամուտներից մեկը։

Որովհետև Արևմտյան Հայաստանի կլիմայական պայմաններում ոռոգման հարցը գյուղատնտեսության համար ունի կենսական նշանակություն, ապա հարկի այս ձևը առիթ է տվել չարաշահումների։ Ըստ արտացոլված է Էրզրումի, Մալաթիայի և մի շարք այլ վայրերի կանուն-նամեններում։

Էրզրումի նահանգում, երբ ամառվա շոգ ամիսներին ջրի պակասը իրեն խիստ պզալ էր տալիս, ջուրը տնօրինող ֆեոդալները ջրամբարտալիներից օգտվելու համար պահանջում էին բարձր գներ։ Ընչադուրկ գյուղացին պահանջված գումարը տալու հնարավորություն չունենալով, տնտեսապես քայքայվում էր։ Այս մասին Էրզրումի կանուն-նամենում ասված է հետևյալը.

«Եվ վերոհիշյալ Լիվայում (Էրզրումում) ջրի որոշ առուներ կան որոնցով գյուղացիները իրենց մշակույթները ջրելիս են եղել։ Սրանից առաջ, վերոհիշյալ վիլայեթը գրանցելու ժամանակ, գրանցող քարտուղարը կայսերական դաֆթարում հիշյալ առուների ջրերը յուրաքանչյուր գյուղին ու մշակելի տարածություններին բավարարելու չափով դաֆթարում արձանագրած է։ Եվ ամառվա ամիսներին ջուրը քիչ լինելու հետևանքով տեղերին չի բավարարում։

Ջրի համար հերթի կանգնած մարդկանց ջուր չտալով, բարձր գներով հետո գտնվող գյուղերի բնակիչներին ըստ նրանց ցանկության ջուրը վաճառելիս են եղել... Այնուհետև հիշյալ վիլայեթը սորից գրանցելու ժամանակ, երբ առուների վիճակը մանրամասն ուսումնասիրվեց (ապա պարզվեց), որ հիշյալ լիվայում գտնվող գյուղերի բնակչության մի մասը քայքայվել ու որոշ գյուղեր ծաղկել են։ Մյուսքի, վակֆի (իրավունքով) առուների տերերը

¹ Kanun-name-i vilayet-i Ergani, s. 150.

² Նույն տեղում։

³ Erzurum kanunu, s. 67, Gürcistan kanun-namesi s. 193, Arabgir kanun-namesi 172 և այլն։

հարուստներին ջրի գիշերային ու ցերեկային հերթերը վաճառել են: Եվ որոշ դժուրների ուսյաթների արտերը ավելորդ գումարը վճարելու կարողություն չունենալու պատճառով փչացել ու այրվել են և ուսյաթին (այսպիսով) բռնություն ու ցավ է պատճառվել¹:

«Ռեսմ-ի դեշտրանի» («Resm-i destbani», արարերեն-պարսկերեն), նշանակում է դաշտ պահելու հարկ: Այս հարկը պետք է գանձվեր այն ժամանակ, երբ որևէ ուսյաթի կենդանին (ձին, եղը, գոմեշը, ոչխարը և այլն) մտնել մի որևէ ցանք ու փսաս պատճառներ: Այդ դեպքում կենդանու տիրոջը, որպես պատիժ, տրվում էր զավագանի հինգ հարված և գանձվում նրանից 5 ալչև², սակայն, ինչպես դժվար չէ եզրակացնել Գյուրջիստանի ընդարձակ դաֆթարից, «Ռեսմ-ի դեշտրանին» դարձել էր մշտական գանձվող հարկ տեղի ուսյաթներից, անկախ նրանից, ցանքսի փսաս պատճառով է, թե ոչ:

«Ռեսմ-ի թափու» — (Resm-i tapu — արարերեն-թուրքերեն), հարկ թափուի իրավունքի համար: Այս հարկը պարտավոր էին վճարել այն բոլոր ուսյաթները, որոնք դաֆթարներում արձանագրված էին: Վճարելուց հետո նրանք իրավունք ձևով կրեին մշակել հողը: Թափուի իրավունքը ժառանգական էր, անցնում էր ինչպես հորից որդուն, այնպես էլ մի եղբորից մյուսին³:

«Ռեսմ-ի թափուն» գանձվում էր նաև տուն կառուցելու իրավունք ձևով բերելու համար, ըստ որում, լավագույն հողամասից գանձվում էր հիսուն, միջակից՝ 30 և վատ տեղից՝ 10 ալչև⁴:

Արձանագրված բոլոր ուսյաթները պարտավոր էին մշակել հողը: Հակառակ դեպքում նրանցից գանձվում էին հատուկ հարկեր՝ «չիֆթ բոզան ալչևսի», որ նշանակում է «չիֆթը քայքայողի հարկ», հիմնականում մուսուլման ուսյաթներից և «լեվենդլի» բոլոր ուսյաթներից, նաև այլ հարկեր, այլ անուններով:

Թուրքերեն «լեվենդ» (levend) բառը, որտեղից և առաջացել է, «լեվենդլի»-ը, ունի մի շարք իմաստներ: Եշտանակում է ծուլ, գեղեցիկ, նախընտրված աշխատող թիավար (վերջինը մուտք է գործել թուրքերենի մեջ իտալերենից): Հավանաբար լեվենդլիլը օգտագործվել է «ծուլ» իմաստով: Մալաթիայի կանոնի համաձայն, այն ուսյաթը, որը չէր մշակի իր տրամադրության տակ եղած հողը ու կզրադվեր առևտրով, պարտավոր էր վճարել երեք քիլ⁵ ցորեն, որպես լեվենդլիլ ալչևսի: «Լեվենդլիլի» դրամական չափը հավասար էր 150 ալչևի⁶:

Հողագործությունը թողած ու առևտրով զբաղվող ուսյաթներից գանձվող հարկը կոչվում էր նաև «Ռեսմ-ի մյուշերրե» («Resm-i mucerred») —

¹ Erzurum kanunu. s. 70.

² Erzurum kanunu. s. 68. Իս II kanunu, s. 49, Diyarbekir kanunu s. 210.

³ Defter-i müfasal vilayet-i Gürcistan s. 24, 25, 27, 35, 37, 41, 47 և այլն:

⁴ Gürcistan kanun-namesi. s. 197. Նաև Omer Lütfi Barkan «Türkiyede toprak meselesinin tarihi esasları» Uku 1938, cilt XI, s. 54.

⁵ Իս II livası kanunu. s. 49.

⁶ Քիլին թուրքական չափ է, որն ըստ կոչիբեյի հավասար է 8000 գիրհեմի (սե'ս. А. С. Тверитникова, «Второй Трактат Кочибей», Учёные записки, 1953, VI, стр. 252).

⁷ Trabizon kanunu. s. 83.

առևտրականի հարկ, տարեկան վեց ակչև չափով: Ըստ էրզրումի կանունի՝ դավթարում արձանագրված ու առևտրով զբաղվող մուսուլման ուսլաթներից «ոհսմ-ի մյուշերբետ» չի գանձվել¹:

Հպատակ ժողովրդի կողոպտման մի միջոց էր նաև «Իմդադ-ի սեֆերիեն» («İmdâd-i seferiye») արշավանքի համար հարկ: Հարկի այս ձևը հիշատակված է Թուրքիայի նվրոպական մասի կանուն-նամեններում ու չի հիշատակված հայկական նահանգներին վերաբերող կանուն-նամեններում: Սակայն դա չի կարող հիմք ծառայել ասելու, որ այդ հարկը չի գանձվել հայկական նահանգներում: Հայկական ժամանակագրություններում մի շարք անգամ հիշատակվում են «Իմդադի սեֆերիեն»-ի գանձումները: Հարկն, իհարկե, որոշակի չափ չի ունեցել և կախված է եղել պետական պաշտոնակատարների կամայականություններից:

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԵՐԸ

Հայկական նահանգների կանուն-նամեններում հիշատակված հարկերի մեջ զգալի տեղ են զբաղում անասնապահության համար գանձված հարկերը: Հիմնական հարկը «ոհսմ-ի աղնեմ» է («Resm-i agnem»), ոչխարի համար գանձվող հարկը: Այդ հարկը հիշատակվում է նաև հետևյալ անուններով. 'ադեթ-ի աղնեմ' («Adet-i agnem») «կոյուն ոհսմի» («Koyun resmi»).

Գանուն-նամեններում հիշատակված են այդ հարկի հետևյալ տարբերակները՝ «ոհսմ-ի յալակ» («Resm-i yaylak»)՝ ամառանոցը բարձրանալիս ոչխարների համար գանձված հարկը, «ոհսմ-ի կշլակ» («resm-i kışlak»)՝ կամ «ոհսմ-ի յաթակ» («resm-i yatak»)՝ ձմեռելիս ոչխարների համար գանձված հարկը: Վերջինը կոչվում է նաև «չոբան բեգի» («Coban begi»). «ոհսմ-ի գյուդե» («Resm-i güde») կամ «քյոփրու հակկը» («köprü hakkı»)՝ կամուրջներից ոչխարների հոտը անցնելու ժամանակ վերցված հարկը:

«Ռեհսմ-ի աղնեմ»ը կամ ադեթ-ի աղնեմ»-ը էրզրումի, Գյուրջիստանի և այլ կանուն-նամենների համաձայն երկու ոչխարի համար տարեկան մեկ ակչև է կադմել: Ոչխարի ու գառան միջև տարբերություն չի գրվել:

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՒ ՀԱՐԿԵՐԸ

Հիմնական հարկը կոչվել է «ոհսմ-ի կովան» (Resm-i kovan)՝ փեթակի հարկ, կոչվել է նաև «ոհսմ-ի կուվվերե» («Resm-i küvvare»)՝ ունի նույն իմաստը: Արևմտյան Հայաստանում մեղվաբուծության զարգացած աստիճանը նկատի ունենալով պետք է ենթադրել, որ այս հարկը հալ գյուղացուց գանձվող ամենատարածված հարկերից էր:

ԱՅԼ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐԿԵՐ

«Ռեհսմ-ի 'արուս» («Resm-i 'arus», արարերեն)՝ ամուսնական հարկ: Այս հարկը գանձվում էր ինչպես ոչ մուսուլման, այնպես էլ մուսուլման ուսլա-

¹ Erzurum kanunu, s. 63.

² Erzurum kanunu, s. 68. İc II kanunu, s. 50, Gürcistan kanunnamesi s. 198, Arabgir kanunu s. 172.

³ Gürcistan kanunnamesi, s. 198, Malatya livası kanunu, s. 112, Erzurum kanunu, s. 69.

լից: Տարբերությունը միայն այն էր, որ հայերը ամուսնանալու դեպքում պետք է հարկ վճարեին և՛ այն վայրի ֆեոդալին, որտեղ արձանագրված էին, և՛ հայ կեղեցուն: Այդ մասին պարզ կերպով նշված է էրզրումի կանուն-նամեում: Այնտեղ ասված է, որ էրզրումի վանքերի հոգևորականները «իրենց ձեռքերում սրբազան որոշումներ ունենալու պատճառով» իրավունք ունեն իրենց ենթակա անհավատներից գանձելու «ամուսնության հարկեր» («nikan akcesi») ըստ (նրանց մոտ) տիրող սովորության և ըստ նրանց հայեցողության¹:

Տեղի ֆեոդալին վճարվող ռենսմ-ի 'արուսիեյի չափը, ըստ կանուն-նամենների, կույս աղջկա ամուսնանալու դեպքում 60 ալչև էր, իսկ այրի կնոջ՝ 30: Եթե աղջիկը, կամ այրի կինը ամուսնանում էր հարևան թիմարում արձանագրված մարդու հետ, այդ դեպքում նրա ծնողները պարտավոր էին հարկի կեսը մուծել տեղի իրենց ֆեոդալին, իսկ կեսը մյուս ֆեոդալին²:

«Սելամլիկ» («Selamlık»)՝ հարկ ողջունելու համար: Այսպես էր կոչվում ռայաթի վճարած այն հարկը, որը տրվելու էր նոր նշանակված ֆեոդալին «նվերի» ձևով: Հարկը մեծ մասամբ բնատուրք էր:

Էրզրումի կանուն-նամեում մեղադրվում է մի ոմն սանջակ բեկ՝ Սում-բատ անունով (հավանաբար իսլամացած հայ), սելամլիկի անվան տակ ժողովրդին կողոպտելու համար: 1540 թ. նա էրզրումի վիլայեթի գլուղների ամեն մի տնից վերցրել է մեկական գլուխ պանիր և մեկական գառ: Իսկ Մուշի պետական պաշտոնականները, ասված է նույն տեղում, յուրաքանչյուր յոթ տնից վերցրել են մեկ գառ և մի գլուխ պանիր³:

«Բայրամչեկ» (Bayramcek) և կամ «բայրամլիկ» (bayramlık): Դարձյալ պարտադիր հարկ, որը գանձվում էր ռայաթից ֆեոդալի կամ տեղում նշանակված կառավարչի օգտին մուսուլմանական տոների օրերին⁴:

«Բայրամչեկի» նման հարկեր են նաև «ռենսմ-ի շահնեգի» («Resm-i sahnegi») «նահիբչեկը» և կամ «ռենսմ-ի նիսբեթը» («resm-i niyabet»): Ըստ էրզրումի կանուն-նամեի, որպես «ռենսմ-ի նիսբեթ», գանձվել է վեց ալչև⁵:

Էրզրանի լիվայի կանուն-նամեում ասված է, որ հայկական գյուղ հանդիսացող Բայուրից վերցված է 400 կարաջա ալչև «նահիբչեկ», երկու հարյուր կարաջա ալչև «գիվանչեկ»⁶ և երկու հարյուր կարաջա ալչև «բայրամչեկ»⁷:

«Ռենսմ-ի րրգադիե» («resm-i ırgadiye») — այսպես էր կոչվում ռայաթներից տեղի ֆեոդալների օգտին տարեկան որոշ օրեր պարտադիր աշխատանքի փոխարեն գանձված հարկը: Անվանվում էր նաև «կուլլուկ» («kulluk»)՝ ծառայություն իմաստով: Սա ինքնըստինքյան ցույց է տալիս գյուղացու կախյալ վիճակը ֆեոդալից:

¹ Erzurum kanunu, s. 63.

² Erzurum kanunu s. 69, Gürcistan kanunnamesi s. 199.

³ Erzurum kanunu, s. 67.

⁴ Defter-i yasaha liva-i Ergani s. 149, Arabgir livasi kanunu, 17i, kanuni liva-i Kayseriye s. 56.

⁵ Erzurum kanunu, s. 68.

⁶ Defter-i yasaha liva-i Ergani s. 149.

⁷ Տե՛ս Defter-i yasaha liva-i Ergani, s. 151: երեք կարաջա ալչևն հավասար է եղել մեկ օսմանյան ալչևի (նույն տեղ, էջ 131):

⁸ Նույն տեղում:

Այս նույն հարկը էրդանիի կանուն-նամեում հայտնի է նաև «ռեսմ-ի մուշակ» («Resm-i muşak») անվան տակ: «Մուշակ»-ը հավանաբար հայերեն մշակն է, որովհետև նույն կանուն-նամեում ասված է, որ դա գանձվում է հայերից, իսկ մուսուլմաններից չի գանձվել¹:

«Ռեսմ-ի մուշակը» կամ տարեկան վեց օր ծառայություն էր, կամ 24 ակչև հատուցում²:

«Ռեսմ-ի մարհասիև» («Resm-i marhastye»)՝ քրիստոնյա հոգևորականությունը հարկերից «մուսթ» կամ «մուսալլեմ» (ազատ) թողնելու համար քրիստոնյա հպատակներից գանձված հարկի անունն է:

Կամախի կանուն-նամեում ասված է, որ Կամախի կաղաչի (փոքր վարչական միավորում) հայերին նշանակված է 11 հազար ակչև, իսկ էրզնջանին՝ տարեկան 8 հազար 250 ակչև, այնպես որ յուրաքանչյուր տնից գանձվել է 15 ակչև «ռեսմ-ի մարհասիև»: Տեղի հայերը բողոքել են Բ. Դուսնը, նշելով, որ «Ծա ևս մեզ համար մի ավելորդ խարաջ եղավ»³: Իսկ Գյուլըջիստանի կանուն-նամեում ասված է, որ Գյուլըջիստանի վիլայեթում «մարհասիև» ասելով յուրաքանչյուր անձից երկուական ակչև է գանձվել⁴:

ԱՌԵՎՏՐԻՅ ԴԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԵՐԸ

Արևմտյան և Հարավային Հայաստանի քաղաքները (Վան, Էրզրում, Կամախ, Երզնկա և այլն) 16-րդ դարում հանդիսանում էին առևտրա-արհեստագործական կենտրոններ: Եվ պատահական չէ, որ այս վիլայեթների կանուն-նամեները հիմնականում նվիրված են առևտրից գանձվող հարկերի թվարկմանը:

Այս փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետությունը փաստորեն հարկ էր վերցնում համարյա բոլոր՝ ինչպես տեղում ծախվող, այնպես էլ արանդիտային ապրանքներից:

Այս հարկերը հիմնականում հայտնի են «բաշ», «բաշ-ի բազար» (bac-i bazar), «բաշ-ի թամդա» (bac-i tamga), «թամդա-ի սիահ» («tamga-i siyah»), «բաշ-ի բուզուրգ» («bac-i buzurg»)՝ «Իհտիսաբ ռեսմի» («ihtisap resmi»), «մուխտասիր-ի էհտիսաբիև» (muhtesib-i ihtisabile) և այլ տերմիններով: Այս հարկերի նշանակումը վերագրվում է Ակ-կոյունլուների տիրակալ Ուզուն Հասանին:

Օմեր Լութֆի Բարքանը իր «Օսմանցիների ժամանակ Ակ-կոյունլու տիրակալ Ուզուն Հասան բեկին վերաբերող օրենքները» հոդվածում տալիս է այս տերմինների հետևյալ բացատրությունը:

«Բաշ բառը ընդհանրապես հարկ իմաստով է օգտագործված: «Բաշ-ի թամդա» (կնիքի) հարկ ասել է: Թամդայի նշանակությունը պարզ է. քաղաքում առնվող ու ծախվող ամեն տեսակի ապրանքներից, գործված կերպասից և մորթված կենդանիներից գանձվող հարկի անունն է: Սրան մեծ մասամբ սև կնիք (թամդա-ի սիահ) ևս կասվի: Տրանդիտ կերպով երկրից անցնող և կամ թե երկրում մնալու համար բերված ապրանքներից գանձվող մաքսա-

¹ Defter-i yasah livai Ergani, 151.

² Տույն տեղում:

³ Տե՛ս, Fasl-i tamga-i siyah-i kaza-i kemah ve Erzincan, s. 187.

⁴ Gürcistan kanunnamesi, s. 199.

հարկի անվանը «բաջ-ի բուզուրդ», այսինքն «մեծ բաջ» կասվի: Այս երկրորդ տեսակի ապրանքները շուկայում ծախվելիս, դրանց համար առանձին վերցված կնիքի հարկին «բաջ-ի թամդա» կասվի: Թամդան այստեղ ընդհանրապես բաջ (այսինքն հարկ) իմաստով է օգտագործված¹: Հարկը գանձելու ժամանակ որպես չափի միավոր ընդունված էր՝ ուղտի, ձիու, ավանակի բեռը (լուկ), բամբակյա, բրդյա, մետաքսյա ապրանքների համար՝ թուփը (մի ամբողջական կտոր), թանկարժեք մետաղների, գոհարեղենների, զարդարանքների համար՝ մսկալը²:

* * *

1515—1516 թ/թ. երբ Արևմտյան Հայաստանը և Քրդստանը միացան Օսմանյան կայսրությանը, քրդական կյանքում տիրող ֆեոդալական հարարերությունների մեջ ոչ մի էական փոփոխություն չկատարվեց և չէր էլ կարող կատարվել:

Բոլոր քուրդ էմիրներն ու բեկերը փաստորեն պահպանեցին իրենց նախկին արտոնությունները: Նրանք թուրքական կառավարությունը ենթարկվում էին ձևականորեն: Դեռ միացումից հետո էլ քրդական էմիրների մի մասը շարունակում էր տատանվել թուրք ու զղբաշ հովանավորների միջև ընտրություն կայացնելու հարցում: Շեհրիզուրի (Դիարբեքիրի) էմիր Թիմուր խանը մինչև իսկ 1580 թ. հանդես էր գալիս մերթ թուրքական և մերթ զղբաշական օրինադրությամբ:

Մանր ու երկրորդական նշանակություն ունեցող քուրդ բեկերը միացումից հետո ձևով բեկեցին կիսանկախություն: Նրանց զինվորական ուժը օգտագործվում էր օսմանյանների կողմից, որպես առաջապահ ուժ, ոչ միայն Պարսկաստանի դեմ, այլև նվիրագրվում մղված պատերազմների ընթացքում: Այստեղից էլ հասկանալի է այն սիրալիր քաղաքականությունը, որ վարում էր Օսմանյան կառավարությունը քուրդ բեկերի նկատմամբ: Կառավարությունը առատորեն պարգևատրում էր նրանց հողային տիրույթներով:

Եթե քրդական էմիրները ստանում էին ամբողջ մարզերի կառավարում և Քրդստանում ու Հայաստանում, ապա մանր բեկերը հատուկ սուլթանական հրովարտականքով ստանում էին մինչև իսկ տարեկան 70 հազար ակչև եկամուտ բերող զիամեթներ³, թիմարներ, ինչպես նաև հողային տիրույթներ՝ «օջակլիք», «արփալիք» իրավունքներով: Բացի այդ, քրդական բեկերը տիրում էին ամբողջական մարզերի մյուլքի իրավունքով, պետությունից ստանալով հատուկ վկայականներ՝ մյուլք-նամեներ⁴: Մյուլքի տարբերակը հանդիսանում էր կառավարության կողմից քուրդ բեկերին հանձնված «իկտա-ի թեմլիքին» (ikta-i temliki)⁵:

¹ Տե՛ս, M. Fuat Köprülü «bac», İslam ansiklopedisi, II cilt, İstanbul 1952, s. 189.

² Հասան փաղիշահի Բայրուրտ քաղաքի «Բաջ-ի բուզուրդ» և «Ծամդա-ի սիահի» ընդարձակ կանուն-նամեն տե՛ս, Tafsil-i kanunname-i tamga ve bac ber mucebi kanun-i Hasan padisah (Bitlis kanunu, s. 181).

³ B. F. Charmoy, Cherêf-Nameh ou fastes de la nation Kourde par Ghérêf-Ouddine, prince de Bitlis, tome II, 1-ère partie, page 113.

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 182:

⁶ Նույն տեղում, էջ 33:

⁷ Նույն տեղում, էջ 112:

Ունենալով իրենց իրավասություն տակ այսպիսի տիրույթներ, քուրդ բեկերը դաժան կերպով շահագործում էին քուրդ գյուղացիության ընդհանրապես, և հալ գյուղացիությանը մասնավորապես: Բոլոր հայերը քուրդների համար հանդիսանում էին ֆլահներ, այսինքն գյուղացիներ: Դուրդ բեկերը իրենց հիմնական եկամուտները ստանում էին հայերից: Այսպես՝ Շերեֆ Ուդդինը գրում է, որ Հեյդին՝ Ջեզիրեի շրջաններից մեկը, ուր հիմնականում ապրել են հայերը, հանդիսացել է Ջեզիրեի քուրդ բեկերի եկամուտների աղբյուրը¹:

Դաժան կերպով շահագործելով գյուղացիությանը, քուրդ բեկերը իրենց ձեռքում կենտրոնացնում էին հսկայական հարստություն: Այսպես՝ Ջեզիրեի քուրդ էմիր Մուհամմեդը, 1578 թվականին ունեցել է 12 հազար ոչխար, 100 հազար գլուխ թռչուն², իսկ երբ նա մահացել է, նրա գանձարանում հայտնաբերվել է 200 հազար ոսկի դրամ, թանկարժեք մետաքսյա գործվածքներ և այլն: Պալուի քուրդ բեկերն ունեցել են 10 հազար ոչխար: Դա կարող էր ձեռք բերված լինել միայն խստագույն շահագործման միջոցով:

Թուրքական կառավարությունը չէր ուզում անմասն մնալ քուրդ բեկերի կողմից կատարվող շահագործումից: Տեղերում նոր քուրդ կառավարիչներ նշանակելիս, կամ նրանց իրավունքները վերահաստատելիս, կառավարությունը նրանցից պահանջում էր հսկայական դրամար, որը կոչվում էր մատուցման հարկ (տակաբուլ, takabul)³: Այս հարկը վճարելու համար քուրդ բեկերը, բնականարար, սաստկացնում էին տեղի հպատակների, նախ և առաջ հայերի շահագործումը:

¹ B. F. Charmoy, Chéréf-Nameh ou Fastes de la nation Kourde, par Chéréf-Oud-dine. prince de Bitlis, tome II, 1-ère partie, page 113.

² Նույն տեղում, էջ 159:

³ «Chéref—Nâmehe», tome I, 1-ère p., p. 130.